

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ԺԳ.00.01. - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ռ. Ա. Մարդյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Պ. Հ. Գևորգյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Ա. Վ. Հովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի Վ. Բրյուսովի անվան
լեզվահասարակագիտական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 11-ին՝ ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Խ. Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 11-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար,

մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝  **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Այսօր համաշխարհային զարգացումները բնութագրվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընթացող հիմնարար փոփոխություններով՝ ժողովրդավարություն, գիտությունների ինտենսիվ զարգացում, նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական նոր պայմաններն առաջադրել են կարևոր հասարակական պահանջներ աճող սերնդի ձևավորման նկատմամբ, որը պետք է հանդես գա որպես կյանքի ու մշակույթի բարձրագույն արժեք, լինի ակտիվ ու նախաձեռնող, ունակ վերափոխելու իրեն և իրեն շրջապատող աշխարհը: Այդ տեսանկյունից կրթական հաստատությունների առաջնահերթ խնդիրը պետք է լինի այնպիսի որակյալ կրթության ապահովումը, որը կհամապատասխանի պետության, հասարակության և անձի պահանջներին:

Այսօր էապես փոխվել է կրթության շահառուների սոցիալական պատվերը՝ կապված հասարակական կյանքի բոլոր ոլորտներում շուկայական հարաբերությունների ձևավորման, այդ թվում՝ կրթական շուկայի նոր պահանջների հետ: Բազմաթիվ հակասություններ են ծագել դպրոց-սովորող-ծնող փոխգործակցության մեջ, և այդ հակասությունների հիմնական պատճառ են համարվում դպրոց-ընտանիք համագործակցության ձևերի անկատարելիությունը, սովորողակենտրոն ուսուցման ոչ լիարժեք կազմակերպումը, սովորողին որպես ուսումնական գործընթացի ակտիվ սուբյեկտ չդիտարկելը, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման, ուսուցչի մասնագիտական կոմպետենտության ոչ միշտ բավարար մակարդակը:

Կրթության պահանջված որակի ապահովումը դպրոցի գործունեության արդյունքի գնահատման հիմնական չափանիշն է և անմիջականորեն կապված է կրթության համակարգի կատարելագործման հետ, որը ենթադրում է կրթության ռազմավարության, մեթոդաբանության, տեխնոլոգիաների, կորպորատիվ կառավարման մեթոդների, մանկավարժական կադրերի պատրաստման գործընթացի բազմակողմանի կատարելագործում, անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է դպրոցի մեթոդական միավորումների ակտիվ գործունեությունը՝ որպես կրթական գործընթացի արդյունավետության ապահովման, ուսուցիչների մասնագիտական կայացման և կրթության որակի բարձրացման կարևորագույն միջոց:

Արդյունավետ կրթության կազմակերպման հիմնախնդիրը հուզել է բոլոր ժամանակների մտածողներին՝ փիլիսոփաներին, հոգեբաններին, մանկավարժ-գիտնականներին, սոցիոլոգներին, իսկ կրթական նոր՝ անձնակողմնորոշիչ, ձևավորող, զարգացնող հարացույցի փոփոխման և կրթության արդիականացման

ժամանակակից պայմաններում այն ավելի հրատապ է դառնում:

Այդ հիմնախնդրին են նվիրված արտասահմանյան և հայրենական մի շարք գիտնականների՝ Բ. Բայերի, Մ. Շարփայի, Չ. Ն. Բուլախովի, Ս. Վ. Կուլնիչի, Վ. Ի. Գոնչարովայի, Տ. Ն. Մակարովայի, Յու.Ա. Կոնարժևսկու, Վ.Ա. Բոլոտովի, Ս.Լ. Կատանադովի, Մ.Ի. Մախմուտովի, Վ.Ս. Սլաստենինի, Բ. Մարտիրոսյանի, Ն.Կ. Հարությունյանի, Հ.Հ. Պետրոսյանի, Լ.Թ. Ասատրյանի, Մ.Մ. Մկրտչյանի, Ռ.Ե. Պետրոսյանի և այլոց աշխատությունները:

Կրթության կառավարման, ներդպրոցական համակարգերի կարգավորման, դպրոցի մեթոդական գործունեության, ուսուցչի մասնագիտական կայացման և կատարելագործման հիմնախնդիրներին են նվիրված Տ.Ի. Շամովայի, Ն.Վ. Կուզմինայի, Ա.Կ.Մարկովայի, Ե.Վ. Սովետովայի, Յու. Ն. Կուլյուտկինի, Մ.Ն. Սկատկինի, Գ.Ս. Սուխոբսկոյի, Ն.Վ. Նեմովի, Ա.Մ. Մոյսեսևի, Մ.Մ.Պոտաշնիկի, Ս.Վ.Վորոբևովայի, Ա.Ա.Ղուկասյանի, Լ.Թ.Ասատրյանի, Ա.Ս. Կարապետյանի, Ժ.Ս. Թադևոսյանի, Հ. Վ.Խաչատրյանի և այլոց աշխատությունները:

Սակայն, արժևորելով նշված հետազոտությունները, պետք է ասել, որ դպրոցի մեթոդական միավորման՝ որպես ներդպրոցական համակարգի կառավարման ենթահամակարգի, գործունեության զարգացման և կատարելագործման հիմնախնդրի վերաբերյալ համապարփակ և լիարժեք ուսումնասիրություններ դեռևս չկան:

Դպրոցում մեթոդական միավորման աշխատանքների հետագա զարգացման և այդ համատեքստում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման անհրաժեշտությամբ են պայմանավորված մեր հետազոտության կարևորությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության առկա վիճակը, վերլուծել դրանց առանձնահատկությունները, առաջադրել և սոցիոլոգիական հարցումների միջոցով հիմնավորել մեթոդական միավորման գործունեության կատարելագործման և արդյունավետության բարձրացման նոր մոդել:

Հետազոտության խնդիրները

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականությունը, դպրոցի մեթոդական միավորումների գործունեությանը վերաբերող նորմատիվաիրավական փաստաթղթերը և առկա փորձը:

2. Բացահայտել մեթոդական միավորման գործունեության արդյունավետությունը նպաստող պայմանները, խոչընդոտող գործոնները, կրթության համակարգի ժամանակակից մարտահրավերները, դրանց հիման վրա լրամշակել

ժամանակակից դպրոցում մեթոդական միավորման գործունեության հայեցակարգը:

3. Մեկնաբանել մեթոդական միավորման գործունեության նպատակային կողմնորոշիչները և նախանշել զարգացման հեռանկարները:

4. Բացահայտել դպրոցի կառավարման սուբյեկտների և ենթահամակարգերի գործունեության սկզբունքներն ու առանձնահատկությունները:

5. Կազմակերպել սոցիոլոգիական հարցումներ մանկավարժների շրջանում՝ մեթոդական միավորման գործունեության վերաբերյալ, ստացված արդյունքները ենթարկել վերլուծության:

6. Մշակել և փորձարարությամբ հիմնավորել դպրոցի մեթոդական միավորումների գործունեության կառուցվածքագործառնության մոդելը, որը կներառի գործառնությունների, արդյունավետ միջոցների, ձևերի, գործունեության տեսակների, մանկավարժական պայմանների համալիրը՝ ուղղված մեթոդական միավորումների գործունեության կատարելագործմանն ու հետագա զարգացմանը:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեությունն է:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորման գործունեության կատարելագործման արդյունավետ ուղիներն են:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Ուսումնասիրվել և վերլուծվել են դպրոցի մեթոդական միավորումների արդյունավետ գործունեության ձևերը, հայեցակարգային մոտեցումները՝ ելնելով կրթության արդիականացման հիմնախնդրից, կրթության շահառուների պահանջունքներից:

2. Բացահայտվել են դպրոցի մեթոդական միավորումների գործունեության արդյունավետությունը խոչընդոտող գործոնները կրթական համակարգի ժամանակակից մարտահրավերների համատեքստում:

3. Մշակվել և փորձարարությամբ հիմնավորվել է մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության նոր մոդել՝ որպես մանկավարժների մեթոդական միավորման գործունեության կատարելագործման ուղի:

4. Գիտական վերլուծության են ենթարկվել մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության նոր մոդելի կիրառման արդյունավետության վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքները և կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

Հետազոտության համար **մեթոդաբանական հիմք** են հանդիսացել.

- անձի գործունեության և զարգացման փիլիսոփայական, հոգեբանաման-

կավարժական դրույթները՝ Կ.Ա. Աբովխանովա-Սլավսկայա, Բ.Գ.Անանև, Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն.Լեոնտև, Կ. Ռոջերս,

- ժամանակակից դպրոցի զարգացման կառավարման վերաբերյալ տեսությունները՝ Տ.Ի. Շամովա, Պ.Ի.Տրետյակով, Կ.Մ.Ուշակով, Ս.Վ. Վորոբյովա, Տ.Վ. Օրլովա,

- մեթոդական միավորումների գործունեության կատարելագործման դրույթները՝ Ս.Կ. Աբդուլինա, Ա.Կ.Մարկովա, Ի.Ի.Պրոդանով, Ե.Ս.Փոլատ, Վ.Ա. Սլաստենին:

Հետազոտության վարկածը

Դպրոցի մեթոդական միավորման գործունեության արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել, եթե

- ուսումնասիրվեն, վերլուծվեն և համակարգվեն մեթոդական միավորման գործունեության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, տեսությունները և դրանց հիման վրա առաջադրվեն նոր տեսագործնական մոտեցումներ,

- բացահայտվեն մեթոդական միավորման գործունեության արդյունավետությունը խոչընդոտող գործոնները և կրթության համակարգի ժամանակակից մարտահրավերները, որոշվեն գործունեության ուղղությունները, նպատակային կողմնորոշիչները և զարգացման հեռանկարները,

- որոշարկվի և լրամշակվի դպրոցում մեթոդական միավորման գործունեության հայեցակարգը,

- հաղթահարվեն դպրոցի մեթոդական միավորման գործունեության կարծրատիպերը և առաջադրվեն մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության կատարելագործման արդյունավետ ուղիներ,

- մշակվի և փորձարարությամբ հիմնավորվի մանկավարժների մեթոդական միավորման գործունեության կառուցվածքագործառնության նոր մոդել, որը կնպաստի մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Ժամանակակից դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության լրամշակված հայեցակարգը, որը ներառում է նրանց գործունեության նպատակը, սկզբունքները, ուստարվա ընթացքում խնդիրները, արդյունավետության պայմանները, դրա վրա ազդող գործոնները, հայտորոշումը, գնահատումը, նպաստում է դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության ակտիվացմանը և կրթության որակի բարձրացմանը:

2. Մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության արդյունավետությանը նպաստող պայմանների, խոչընդոտող գործոնների բացահայտումը և դրանց հաղթահարման ուղիների նախանշումը ենթադրում է մեթոդական միավորումների գործունեության կատարելագործման լավարկումը:

3. Մանկավարժական գործընթացի սուբյեկտների կառավարման մշակույթի ձևավորումը նպաստում է բոլոր շահառուների (շահակիցների) կրթական պահանջմունքների բավարարմանը:

4. Դպրոցի մանկավարժական մեթոդական միավորման գործունեությունը կատարելագործող կառուցվածքագործառության մոդելը նպաստում է ուսուցիչների ստեղծագործական գործունեությանը, մասնագիտական կայացմանը և զարգացմանը:

5. Դպրոցի մեթոդական միավորումների ոչ կոորդինացված գործունեությունը չի հանգեցնում կրթական գործընթացների օպտիմալացմանը՝ խոչընդոտելով նրանց արդյունավետությունը, միջառարկայական կոորդինացիայի ուժեղացումը, բովանդակությանը, ուսուցման և դաստիարակության անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների զարգացմանը:

6. Սովորողների կրթության որակի բարելավումը մեծապես պայմանավորված է դպրոցի մանկավարժական մեթոդական միավորումների գործունեության կատարելագործմամբ:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են հետևյալ **մեթոդները**.

- տեսական մեթոդներ՝ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, իրավական-նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն, վերլուծություն, համադրում, համեմատում,

- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, անկետավորում, զրույց, հարցազրույց, գործունեության արդյունքների գնահատում,

- վիճակագրական մեթոդներ՝ փորձարարության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների գրաֆիկական պատկերում:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի Ավ.Իսահակյանի անվան թիվ 16 (ավագ), Պ. Ժամկոչյանի անվան թիվ 119 (ավագ), Սիամանթոյի անվան թիվ 162 (հիմնական), Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (ավագ), Գյումրու թիվ 7 (հիմնական), Շիրակի մարզի Ախուրյանի թիվ 1 դպրոցները, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Դպրոցի կառավարման տեսությունն ու պրակտիկան հարստացվել են մանկավարժների մեթոդական միավորման գործունեության վերաբերյալ տեսական նոր դրույթներով ու մոտեցումներով, արդյունավետ միջոցներով, գործունեության ձևերով ու տեսակներով, մանկավարժական պայմաններով, հիմնավորվել են մեթոդական միավորումների գործունեության նպատակային կողմնորոշիչները և նախանշվել են դրանց կատարելագործման հեռանկարները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական դրույթները, արդյունքները, եզրահանգումները առաջարկված ուղիները, մշակված մոդելը կարող են նպաստել դպրոցի կառավարման համակարգի հետագա զարգացմանը, մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության ակտիվացմանը և կատարելագործմանը, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ մանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման համար:

Հետազոտության կազմակերպման փուլերը

Առաջին փուլում (2010-2011թթ.) ուսումնասիրվել է հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, մեթոդական գրականությունը, առանձնացվել են հիմնական հայեցակարգային և տեսական մոտեցումները, բացահայտվել են դպրոցի մանկավարժական մեթոդական միավորումների գործունեության առկա փորձը և արդյունավետությանը խոչընդոտող գործոնները, կրթության համակարգի ժամանակակից մարտահրավերները:

Երկրորդ փուլում (2012-2013թթ.) մշակվել է մանկավարժական մեթոդական միավորումների գործունեության արդյունավետությանը նպաստող միջոցների և ձևերի փորձարարական մոդելը: Բացահայտվել են մեթոդական միավորումների գործունեության առանձնահատկությունները և սահմանվել են սկզբունքները:

Երրորդ փուլում (2014-2015թթ.) իրականացվել է մշակված միջոցների և ձևերի առաջարկված մոդելի փորձարկումը ՀՀ դպրոցներում: Մշակվել են այդ մոդելի արդյունավետության գնահատման չափանիշները: Ամփոփվել, համակարգվել, համեմատվել, վերլուծվել և ընդհանրացվել են մանկավարժական հետազոտությունների արդյունքները, ձևակերպվել են հետազոտության եզրակացություններն ու մեթոդական հանձնարարականները, նշվել են ուղիներ՝ դպրոցի կառավարման համակարգում դրանց ներդրման համար:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են դպրոցի մեթոդական միավորման գործունեության արդյունավետության վերաբերյալ հոգեբանամանկավարժական, մասնագիտական ու մեթոդական գրականության և մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության նպատակին, խնդիրներին, օբյեկտին համարժեք տեսական և էմպիրիկ մեթոդներով մշակված մոդելի կիրառման արդյունավետությամբ, փորձարարության համակարգված բնույթով, տվյալների մաթեմատիկական մշակման միջոցով ստացված արդյունքների համալիր վերլուծությամբ, արված եզրահանգումներով ու հիմնավորմամբ:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնում, գիտաժողովներում, գիտափորձի բազա հանդիսացած դպրոցներում, հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 137 էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են նպատակը, խնդիրները, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, առաջադրված է հետազոտության գիտական վարկածը, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, կիրառված մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության բազան, աշխատանքի կազմակերպման փուլերը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է «**Մանկավարժների մեթոդական միավորումների ձևավորման տեսական-մեթոդաբանական հիմքերը**» և ունի երեք ենթագլուխ: Հիմնավորված են մանկավարժների մասնագիտական մեթոդական միավորումների ստեղծման, կայացման և զարգացման հարցերին վերաբերող պատմատեսական ուսումնասիրությունները, ներկայացվում են տարբեր ժամանակաշրջաններում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության առանձնահատկությունները:

Երկրորդ գլուխը կրում է «**Հանրակրթական դպրոցում մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության կատարելագործման ուղիները**» վերնագիրը և բաղկացած է երեք ենթագլխից:


Առաջին ենթագլխում բացահայտվում են բարեփոխումների ընթացքում մեթոդական միավորումների գործունեության մի շարք առանձնահատկություններ, ժամանակակից դպրոցում առարկայական մեթոդական միավորումների առջև ծառացած մարտահրավերները, զարգացման հեռանկարները, սահմանվում են մեթոդական միավորումների գործունեության նպատակային կողմնորոշիչները: Առաջ է քաշվում մեթոդական միավորումների գործունեության կատարելագործման անհրաժեշտության հարցը և որպես այն իրականացնելու հիմնական ուղի՝ ներկայացվում է մեթոդական միավորումների գործունեության արդյունավետությունն ապահովող՝ մեր կողմից առաջարկվող կառուցվածքագործառնության մոդելը:

Դպրոցի մեթոդական միավորման կառուցվածքագործառնության մոդելը




Երկրորդ ենթագլխում վերլուծվում են մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության վերաբերյալ սոցիալաբան արդյունքները: Սոցիալաբաններն անցկացվել են տնօրենների, փոխտնօրենների, մեթոդական միավորումների նախագահների և ուսուցիչների շրջանում: Հարցմանը մասնակցել են 200 ուսուցիչներ, /այդ թվում՝ 15 տնօրեն, 23 փոխտնօրեն, 35 մեթոդմիավորման նախագահ, 127 ուսուցիչ/: Անցկացվել են նաև բանավոր հարցումներ, զրույցներ, դիտումներ: Հարցաշարերի հարցերը տարբեր են եղել, սակայն բոլորն էլ ունեցել են մեկ նպատակ՝ բացահայտել մանկավարժ-

Ժների մեթոդական միավորումների գործունեության արդյունավետության իրական վիճակը: Օրինակ, փոխտնօրեններին ուղղված հարցաշարում տեղ գտած հարցերից մեկի պատասխանների վերլուծության արդյունքում բացահայտվեց, որ նրանց 38%-ին բավարարում է մանկավարժների մեթոդական միավորման գործունեության ավանդական մոդելը, 41%-ին՝ ոչ լիարժեք, իսկ 21%-ին՝ ոչ:




Տրամագիր 1. Փոխտնօրենների պատասխանների տոկոսային ցուցանիշները

Նույն նպատակով հարցումներ են անցկացվել մեթոդական միավորումների նախագահների շրջանում: Այս հարցումներից բացահայտվել է, որ մեթոդմիավորման նախագահների 52%-ը պնդում է, որ դպրոցներում ստեղծված են ուսուցչի մասնագիտական զարգացման համար լիարժեք պայմաններ, սակայն մտահոգիչ է այն, որ հարցվողների 48%-ը գտնում է, որ այդպիսի պայմաններ դպրոցներում չկան, կամ դրանք ոչ լիարժեք են:



Տրամագիր 2. Մեթոդական միավորումների նախագահների պատասխանների տոկոսային ցուցանիշները


Ուսուցիչների շրջանում նույնպես անցկացվել են սոցիալարցումներ, որի ընթացքում հարցերից մեկի միջոցով բացահայտվել է սեփական մասնագիտական գործունեության արդյունքներից նրանց բավարարվածության աստիճանը: Այստեղ անհանգստացնող է այն, որ հարցվողների միայն 19%-ն է այն գնահատել բարձր, մինչդեռ ցածր է գնահատել հարցվողների 43%-ը, միջին աստիճան նշել է 38%-ը: Իսկ մասնագիտական գործունեությունից անբավարարվածության բարձր տոկոսը խոսում է այն մասին, որ ուսուցիչը չգիտի կամ չի կարող այնպես իրացնել իրեն մասնագիտական դաշտում, որ բավարարվածության զգացում ունենա իր կատարած աշխատանքից: Այս հանգամանքն անպայման կանդրադառնա աշակերտների սովորելու ցանկության, ինչպես նաև կրթության որակի վրա:



Տրամադիր 3. Ուսուցիչների պատասխանների տոկոսային ցուցանիշները

Մեր կարծիքով, այս արդյունքները հիմնավորում են այն ենթադրությունը, որ մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության ոլորտում անհրաժեշտ են իրականացնել նոր փոփոխություններ, գտնել այն ուղիները, որոնք այդ գործունեությունը կդարձնեն առավել բովանդակային, նպատակային և այլն: Այդպիսի եզրահանգումների ենք հանդիպում նաև դպրոցի տնօրեններին ուղղված հարցերի պատասխանների վերլուծության ժամանակ:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում ներկայացվում է մանկավարժների մեթոդական միավորումների աշխատանքների կատարելագործման համար առաջարկվող մոդելի արդյունավետության հիմնավորումը: Այդ նպատակով դպրոցների մեթոդմիավորումների նախագահների և ուսուցիչների շրջանում անցկացրել ենք կրկնական հարցումներ նույն հարցաշարերով և ունենք բավականին հետաքրքիր պատկեր:



Տրամագիր 4. Մանկավարժների մեթոդական միավորումների նախագահների կրկնական հարցման պատասխանների տոկոսային ցուցանիշները

Նշենք, որ մանկավարժների մեթոդական միավորումների աշխատանքների կատարելագործման համար առաջարկվող մոդելի արդյունավետությունը հիմնավորվել է նաև մեթոդական միավորման անդամ ուսուցիչներին ուղղված հարցաշարի միջոցով:

Ստացված արդյունքները փաստում են այն մասին, որ մեր կողմից առաջարկված և դպրոցներում կիրառված մոդելը օգնել է ուսուցիչներին հաղթահարելու առաջացած դժվարությունները (67%), նպաստել է ստեղծագործական, հետազոտական գործունեության իրականացմանը (62%), մոդելով նախատեսված պայմանները նպաստել են ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների արդյունավետ յուրացմանը (64%), ուսուցիչների մոտ սեփական մասնագիտական գործունեությունից բավարարվածության ձևավորմանը (58%):

Հարկ է նշել, որ ստացված արդյունքները դրան նախորդող բանավոր հարցումների, զրույցների, դիտարկումների արդյունքներից զգալի բարձր են:

Ինչպես ցույց տվեցին մոդելի կիրառման գործընթացում մեր կողմից կատարված դիտարկումները, այն նպաստեց նաև դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսուցիչների աշխատանքների ստեղծագործական բնույթի ձևավորմանը: Արդյունքում այս դրական փոփոխություններն իրենց ազդեցությունը կունենան սովորողների կողմից ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձր մակարդակի ձևավորման, կրթության որակի ապահովման, և, իհարկե, ուսուցիչների մասնագիտական կայացման գործում, ինչը ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպման ու իրականացման գրավականն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության թեմայի հանգամանալից և խորը ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց հետևյալ **եզրակացությունների**.

1. Կրթության զարգացման ժամանակակից միտումները պահանջում են վերանայել դպրոցի կառավարման ենթահամակարգերի գործունեության, այդ թվում՝ նաև առարկայական մեթոդական միավորումների կառավարման առանձնահատկությունները: Հետազոտությունները հանրակրթական դպրոցների մեթոդական միավորումների գործունեության ոլորտում ցույց տվեցին, որ մեթոդական միավորումները դեռևս աշխատում են ավանդական մոդելով, և այդ գործընթացում առկա են որոշակի խնդիրներ:

2. Հիմնախնդրի վերաբերյալ գիտատեսական, գիտամեթոդաբանական գրականության, մեթոդաբանական և հայեցակարգային մոտեցումների վերլուծության արդյունքում բացահայտվեցին մեթոդական միավորման գործունեության արդյունավետությունը խոչընդոտող հետևյալ գործոնները՝ մեթոդական միավորումներում քննարկումների ոչ միշտ արդյունավետ բովանդակություն, անձնակողմնորոշիչ-զարգացնող նոր կրթական հարացույցի ոչ արդյունավետ ներդրում, պլանավորված հարցերի ձևական բնույթ, ուսուցիչների ստեղծագործական-հետազոտական աշխատանքների պասիվ վիճակ, ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության անհամապատասխանություն դպրոցի գործունեության և ռազմավարական ուղղություններին, ուսուցիչների ինստիտուցիոնալ մշակույթի պատրաստվածության ցածր մակարդակ,

չափորոշից օգտվելու մշակույթի բացակայություն, սկսնակ ուսուցիչների ոչ բավարար մասնակցություն մեթոդական միավորումների աշխատանքներին, մեթոդական միավորումների ոչ կոորդինացված գործունեություն, զարգացման ժամանակակից միտումները, դրանց առջև ծառացած մարտահրավերները:

3. Ուսումնասիրությունների հիման վրա սահմանվեցին մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության կողմնորոշիչները, զարգացման հիմնական ուղղությունները, արդյունավետության վրա ազդող գործոնները և փորձարարական դպրոցների մեթոդական միավորումների գործունեության կատարելագործման սկզբունքների, միջոցների, ձևերի, տեսակների, գործառույթների, մանկավարժական պայմանների համալիրը:

4. Մանկավարժների մեթոդական միավորման գործունեության կատարելագործման հիմքում ընկած են կոմպետենտային, համակարգային, սիներգետիկ, գործունային, անձնակենտրոն, մշակութաբանական տեխնոլոգիական մոտեցումները, որոնց հաշվառումը կապահովի մեթոդական միավորումների գործունեության նպատակի իրականացումը դպրոցում:

5. Մեր կողմից առաջարկվեց և փորձարարական դպրոցներում ներդրվեց մանկավարժների մեթոդական միավորումների գործունեության կառուցվածքագործառութային նոր մոդել, որը ներառում է մեթոդական միավորումների տեսակները, դրանց գործունեության արդյունավետության վրա ազդող գործոնները, արդյունավետության ապահովման մանկավարժական պայմանները, ձևերը, հիմնական ուղղությունները, գործառույթները, գործունեության սկզբունքները, միջոցները, ուսուցիչների մասնագիտական զարգացման ուղիները, ռեսուրսների ներգրավումը և վերաբաշխումը, մեթոդական միավորման վերլուծական կենտրոնի բովանդակությունը, գործունեության վերահսկումը, գնահատումը, արդյունքների վերլուծությունը, հայտորոշումը և գործունեության արդյունքները, զգալիորեն կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

6. Հիմնավորվել է, որ մանկավարժների մեթոդական միավորումները հանրակրթական դպրոցներում դառնում են դպրոցի զարգացման հիմնական սուբյեկտներ՝ խթանելով ինովացիաների ներդրումն ուսումնադաստիարակչական գործընթացում, սովորողների կրթության որակի բարձրացումը, ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացումն ու գործունեության դրական մոտիվացիայի ապահովումը:

7. Իրականացվել է գիտամանկավարժական փորձարարություն, որի ժամանակ հաստատվել է առաջադիր վարկածը և մանկավարժների մեթոդական

միավորումների գործունեության մոդելի արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մ. Առաքելյան, Առարկայական մեթոդմիավորումների դերը ժամանակակից դպրոցի զարգացման գործում, Модернизация образования в контексте современных педагогических парадигм, /сборник научно-образовательных докладов и статей/, Ереван, АГПУ-2014г., стр.132-135:

2. Մ. Առաքելյան, Ռ. Մարդոյան, Ուսուցիչների մասնագիտական մեթոդական միավորումների ձևավորման և զարգացման հարցը մանկավարժության մեջ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ /Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/ Երևան, 2015թ., N 1, էջ 45-50:

3. Մ. Առաքելյան, Առարկայական մասնախմբերի գործունեության հիմնական ուղղությունները, «Մանկավարժական միտք» ամսագիր, Երևան, 2015թ., N 3, էջ 112-116:

АРАКЕЛЯН МАРИНЕ АМБАРЦУМОВНА

**ПРОБЛЕМА СОВЕРШЕНСТВОВАНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ
МЕТОДИЧЕСКИХ ОБЪЕДИНЕНИЙ ПЕДАГОГОВ В СОВРЕМЕННОЙ
ШКОЛЕ**

Диссертация на соискание учёной степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 – “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 11 декабря 2015 года в 14⁰⁰ на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК.

Адрес: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52^а, ЕГУ, факультет армянской филологии, 203 аудитория.

Резюме

Актуальность исследования. Сегодня мировое развитие характеризуется кардинальными изменениями во всех сферах общественной жизни: демократизация, интенсивное развитие наук, новые информационные технологии и др. Новые социально-экономические условия в РА породили важные требования к формированию подрастающего поколения, как приоритетной ценности жизни, культуры. Для решения данной задачи необходимо обеспечить качество образования, соответствующее общественным, личностным требованиям.

Актуальность данного исследования состоит в том, что изучена деятельность методических объединений школ в РА, выявлена, обоснована необходимость совершенствования деятельности методических объединений в современной школе.

Цель исследования. Цель исследования-изучить современное состояние деятельности методических объединений педагогов в современной школе, проанализировать ее особенности, предложить и при помощи социологических опросов обосновать новую модель совершенствования и повышения эффективности деятельности методических объединений.

Задачи исследования.

1. Изучить и проанализировать философскую, психолого-педагогическую, методическую литературу по данной проблеме, современный опыт деятельности методических объединений и нормативные документы

относительно их деятельности.

2. Выявить условия, повышающие эффективность деятельности методических объединений, препятствующие факторы, современные проблемы системы образования и на их основе доработать концепцию деятельности методических объединений в современной школе.

3. Прокомментировать целевые ориентации деятельности методических объединений и спроектировать перспективы развития.

4. Выявить принципы и особенности деятельности субъектов и подструктур управления школой.

5. Организовать социологический опрос среди учителей относительно деятельности методических объединений педагогов, проанализировать полученные результаты.

6. Разработать и экспериментально обосновать структурно-функциональную модель деятельности методических объединений, которая включает в себя функции, эффективные средства, формы, виды деятельности, комплекс педагогических условий, направленных на совершенствование и дальнейшее развитие деятельности методических объединений.

Научная новизна исследования.

1. Изучены и проанализированы формы эффективной деятельности методических объединений, концептуальные подходы, исходя из проблемы актуализации образования, потребностей потребителей образования.

2. Выявлены факторы, препятствующие эффективной деятельности методических объединений школ, в контексте современных проблем системы образования.

3. Разработана, экспериментально обоснована новая модель деятельности методических объединений педагогов, которая рассматривается, как путь совершенствования деятельности методических объединений педагогов.

4. Научному анализу подвержены результаты социологического опроса по эффективности применения новой модели деятельности методических объединений и сделаны соответствующие выводы.

Теоретическая значимость. Теория и практика управления школой обогатились новыми теоретическими положениями и подходами относительно деятельности методических объединений педагогов, эффективными средствами, формами и видами деятельности, педагогическими условиями.

Практическая значимость. Теоретические положения исследования,

результаты, выводы, предложенные пути, разработанная модель могут способствовать дальнейшему развитию системы управления школы, активизации и совершенствованию деятельности методических объединений педагогов, а также могут стать основой для подготовки педагогических кадров, их переподготовки и повышения квалификации.

Структура и объём диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы, приложений. Объём диссертации составляет 137 страниц компьютерного текста.

**THE ISSUE OF ACTIVITY IMPROVEMENT OF TEACHERS' METHODOICAL
UNIONS IN THE CONTEMPORARY SCHOOL**

The thesis is prepared towards satisfaction of requirements for academic degree of PhD in Pedagogical Sciences: specialty 13.00.01 – “Theory and History of Pedagogy”.

The defense of the dissertation will be held on 11 December 2015 at 14⁰⁰ at the meeting conducted by the Pedagogy Specialized Council 065 of Higher Qualifying Institution of the Republic of Armenia existing at Yerevan State University.

Address: 0025, Yerevan city, 52^a Kh. Abovyan Street, YSU, Faculty of Armenian Philology, auditorium 203

Summary

The Actuality of the research: Nowadays world development is characterized by drastic changes in various aspects of social life: democratization, intensive advancement of science, new information technologies, etc. New social and economic conditions in the Republic of Armenia gave birth to key requirements towards shaping the raising generation as prioritized value of life and culture. In order to handle the present issue, it is necessary to ensure the quality of education in compliance with social and personal requirements.

The actuality of the present research constitutes that research of the activity of methodical unions of the schools of the Republic of Armenia is a substantial necessity for the improvement of the activity of methodical unions in the contemporary school.

The aim of the research is to investigate the current situation of teachers' methodical unions in the contemporary school, to analyze their peculiarities, to suggest and substantiate a new model for thorough improvement and efficiency increase of the multidimensional activity of methodical unions by administering questionnaires and in-depth semi-structured interviews.

The objectives of the research are:

1. To investigate and analyze philosophical, psychological, pedagogical and methodical literature related to the present issue, activity of methodical unions, current experience and normative documents in connection to the scope of their activity.
2. To reveal the conditions contributing to efficiency of methodical unions' activity, existing factors and contemporary challenges in the education system hindering methodical unions' activity on the basis of which conceptual approaches of the activity of methodical unions will be elaborated.
3. To determine the designated orientation of school methodical unions and their

perspective of development.

4. To disclose principles and peculiarities of subjects and infrastructures of school management.

5. To administer sociological inquiries among the pedagogs on the issue of current experience and activity of methodical unions and analyze the results obtained.

6. To elaborate and effectively substantiate structural and functional model of the activity of methodical unions, which integrates itself complex of functions, multiple efficient resources, various forms, types of activity, supportive pedagogical conditions directed to the improvement and future development of activity of methodical unions.

The scientific novelty of the research

1. Investigated and analyzed efficient forms of school methodical unions' activity, conceptual approaches and theoretical provisions originated from the issue on contemporary education and needs of all education-oriented sides.

2. Revealed the existing factors hindering efficient activity of school methodical unions in the context of contemporary challenges of the education system.

3. Elaborated, experimentally substantiated a new model of pedagogs' methodical unions' activity as effective way to foster improvement of methodical unions' activity.

4. Analyzed the collected data regarding the efficiency of the new model implementation and based on the survey results corresponding suggestions and conclusion were made.

The theoretical value of the research. Pedagogical science, theory and practice of school management enriched with new theoretical provisions and approaches in connection to the activity of pedagogs' methodical unions with effective resources, forms, functions and types of activity as well as supportive pedagogical conditions.

The practical value of the research. Theoretical provisions of the research, outcomes, conclusions, suggestions, proposed ways, and the elaborated model may contribute to future development of the systems of school management as well as may become the basis for preparation of pedagogical personnel, the necessary training related to their professional development leading to qualification increase.

The structure and volume of the thesis. The thesis consists of the following sections: introduction, two chapters, conclusion, list of used literature, and appendices. The volume of the thesis consists of 137 pages of computer text.

